# ՈՐՈՇՈՒՄ
# ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**<<14>> մայիսի 2022թ.** **ք. Մեղրի**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի տարածաշրջանային բաժանմունքի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր Լենիկ Պողոսյանս ուսումնասիրելով 21.02.2022թ-ին հարուցված թիվ 08727757, 07.04.2022թ-ին հարուցված թիվ 08919304 և 19.04.2022թ-ին հարուցված թիվ 08980395 կատարողական վարույթների նյութերը.

## ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ՍԴ2/0014/02/21 կատարողական թերթի համաձայն պետք է Լիաննա Եղիշեի Հովհաննիսյանից հօգուտ <<ԱԿԲԱ բանկ>> ԲԲԸ-ի բռնագանձել 97.518 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ՍԴ/0549/02/21 կատարողական թերթի համաձայն պետք է Լիաննա Եղիշեի Հովհաննիսյանից հօգուտ <<ՍԵՖ Ինտերնեյշնլ>> ՈՒՎԿ ՍՊԸ-ի բռնագանձել 2.115.502 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ՍԴ2/0415/02/21 կատարողական թերթի համաձայն պետք է Լիաննա Եղիշեի Հովհաննիսյանից հօգուտ <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ի բռնագանձել 388.758 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ՍԴ2/0253/02/21 կատարողական թերթի համաձայն պետք է Լիաննա Եղիշեի Հովհաննիսյանից հօգուտ <<Ֆինքա>> ՈՒՎԿ ՓԲԸ-ի բռնագանձել 961.327 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ:

Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան Լիաննա Եղիշեի Հովհաննիսյանին պատկանող բռնագանձման ենթակա գույք չի հայտնաբերվել: Վերը նշված կատարողական վարույթներով պարտապանի պարտավորությունների հանրագումարը գերազանցում է 3.741.384 ՀՀ դրամը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով <<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով և 37-րդ հոդվածի 8-րդ մասով.

## ՈՐՈՇԵՑԻ

Կասեցնել 21.02.2022թ-ին հարուցված թիվ 08727757, 07.04.2022թ-ին հարուցված թիվ 08919304 և 19.04.2022թ-ին հարուցված թիվ 08980395 կատարողական վարույթները 90-օրյա ժամկետով: Առաջարկել պահանջատերերին կամ պարտապանին 90-օրյա ժամկետում սեփական նախաձեռնությամբ սնանկության հայց ներկայացնել դատարան:

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում.

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

<<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ ԼԵՆԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ